ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունիսի 2026 թվականի №-----Ա

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՏՐԱՆՍԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն իր 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) №3 հավելվածով սահմանված՝ հանրային կազմակերպությունների կողմից կատարված գնումների մասին հաշվետվության ներկայացման և գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջների կատարման մոնիթորինգի կարգի, իրականացրել է «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի եռամսյակների գնումների առանձին գործարքների մոնիթորինգ՝ 1-ին (թվով՝ 4 գործարք), 2-րդ (թվով՝ 3 գործարք) և 3-րդ (թվով՝ 3 գործարք),

2) համաձայն Որոշման №2 հավելվածով սահմանված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների (այսուհետ՝ Պահանջներ) 6-րդ կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերության և նույն կետի 5-րդ ենթակետի՝ հանրային կազմակերպությունն իր պաշտոնական կայքում, «Գնումների մասին» օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում (procurement.am) հրապարակում է շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները՝ պայմանագիր կնքելու որոշման

կայացման պահից, ինչպես նաև մրցակցային ընթացակարգերով և բաց շրջանակային համաձայնագրով գնման գործընթացի հայտերի բացման և գնահատման նիստերի արձանագրությունները՝ նիստին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում,

3) վերոնշյալ մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ 2025 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակներում Ընկերության կողմից Պահանջների 6-րդ կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերությամբ և նույն կետի 5-րդ ենթակետով սահմանված հայտարարություններն ու արձանագրությունները հրապարակվել են սահմանված ժամկետների հնարավոր խախտմամբ,

4) Որոշմամբ սահմանված ժամկետների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 9-ին Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 9-ի ՆՄՄ/34.3-Մ2-14/1907-2026 գրությամբ,

5) Ընկերությունը, վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ 2026 թվականի ապրիլի 13-ի N01/18.5/1367-2026 գրությամբ, հայտնել է, որ 2025 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակներում Պահանջների 6-րդ կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերությամբ և 5-րդ ենթակետով սահմանված հայտարարությունների և արձանագրությունների հրապարակման ժամկետների խախտման փաստը պայմանավորված է եղել տեխնիկական բնույթ կրող խնդիրներով և procurement.am էլեկտրոնային հարթակի գերծանրաբեռնվածությամբ: Միևնույն ժամանակ, Ընկերությունը տեղեկացրել է, որ ձեռնարկվել են միջոցներ՝ հետագայում նման խախտումները բացառելու նպատակով,

6) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշմամբ սահմանված՝ վերոնշյալ հայտարարությունների և արձանագրությունների հրապարակման ժամկետները: Մասնավորապես՝

ա) 2025 թվականի 1-ին եռամսյակում իրականացված բաց առաջարկների հարցմամբ կազմակերպված մրցակցային գնման ընթացակարգերի մասով հայտերի բացման և գնահատման նիստերի արձանագրությունները ենթակա էին հրապարակման՝ նիստին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում, այն է՝

- մինչև 2025 թվականի փետրվարի 7-ը՝ TG-2.1-15.01.25-001 ծածկագրով Ընկերության կարիքների համար անվտանգության պահնորդական ծառայությունների ձեռքբերման գործարքի մասով,
- մինչև 2025 թվականի մարտի 14-ը՝ TG-2.2-14.02.25-002 ծածկագրով՝ Ընկերության կարիքների համար արտահագուստի, կոշիկի և անձնական պաշտպանության միջոցների ձեռքբերման գործարքի մասով,
- մինչև 2025 թվականի մարտի 12-ը՝ TG-2.2-19.02.25-003 ծածկագրով՝ Ընկերության կարիքների համար անվադողերի ձեռքբերման գործարքի մասով,
- մինչև 2025 թվականի մարտի 21-ը՝ TG-2.2-26.02.25-004 ծածկագրով՝ Ընկերության կարիքների համար շարժիչային, հիդրավլիկ և տրանսմիսիոն յուղերի, ինչպես նաև քսայուղերի ձեռքբերման գործարքի մասով,

մինչդեռ, վերոնշյալ 4 գործարքների մասով տվյալ արձանագրությունները հրապարակվել են 2025 թվականի օգոստոսի 26-ին:

բ) 2025 թվականի 2-րդ եռամսյակում իրականացված բաց առաջարկների հարցմամբ կազմակերպված մրցակցային գնման ընթացակարգերի մասով հայտերի բացման և գնահատման նիստերի արձանագրությունները ենթակա էին հրապարակման՝ նիստին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում, այն է՝

- մինչև 2025 թվականի մարտի 12-ը՝ TG-2.2-14.02.25-001 ծածկագրով՝ Ընկերության կարիքների համար ավիացիոն յուղի (MC-20) ձեռքբերման գործարքի մասով,
- մինչև 2025 թվականի ապրիլի 9-ը՝ TG-2.2-20.03.25-005 ծածկագրով՝ Ընկերության կարիքների համար ավիացիոն յուղի (MC-20) ձեռքբերման գործարքի մասով,
- մինչև 2025 թվականի ապրիլի 14-ը՝ TG-2.2-20.03.25-006 ծածկագրով՝ Ընկերության կարիքների համար դիզելային գեներատորի ձեռքբերման գործարքի մասով,

մինչդեռ, վերոնշյալ 3 գործարքների մասով տվյալ արձանագրությունները հրապարակվել են 2025 թվականի սեպտեմբերի 10-ին:

գ) 2025 թվականի 3-րդ եռամսյակում իրականացված բաց առաջարկների հարցմամբ կազմակերպված մրցակցային գնման ընթացակարգերի մասով հայտերի

բացման և գնահատման նիստերի արձանագրությունները ենթակա էին հրապարակման՝ նիստին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում, այն է՝

- մինչև 2025 թվականի հուլիսի 31-ը՝ TG-2.1-14.07.25-002 ծածկագրով՝ Ընկերության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման ծառայությունների (ներառյալ պահեստամասերի) ձեռքբերման գործարքի մասով,
- մինչև 2025 թվականի հուլիսի 31-ը՝ TG-2.2-14.07.25-007 ծածկագրով՝ Ընկերության կարիքների համար արտանետիչ կափույրի (СППК) ձեռքբերման գործարքի մասով,

մինչդեռ, վերոնշյալ 2 գործարքների մասով տվյալ արձանագրությունները հրապարակվել են 2026 թվականի մարտի 2-ին:

դ) Պահանջների 6-րդ կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները ենթակա էին հրապարակման՝ պայմանագիր կնքելու որոշման կայացման պահից, այսինքն՝ մինչև պայմանագիր կնքելը:

Տվյալ պարագայում, սակայն՝

• TG-2.1-15.01.25-001, TG-2.2-14.02.25-002, TG-2.2-19.02.25-003 և TG-2.2-26.02.25-004 ծածկագրերով գնման ընթացակարգերի մասով պայմանագրերը կնքվել են համապատասխանաբար՝ 2025 թվականի փետրվարի 20-ին, մարտի 21-ին, մարտի 28-ին և մարտի 31-ին, մինչդեռ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները հրապարակվել են 2025 թվականի օգոստոսի 26-ին,

• TG-2.2-20.03.25-005, TG-2.2-20.03.25-006 ծածկագրերով գնման ընթացակարգերի մասով պայմանագրերը կնքվել են 2025 թվականի ապրիլի 11-ին, մինչդեռ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները հրապարակվել են 2025 թվականի սեպտեմբերի 10-ին,

• TG-2.1-14.07.25-002, TG-2.2-14.07.25-007 ծածկագրերով գնման ընթացակարգերի մասով պայմանագրերը կնքվել են համապատասխանաբար՝ 2025 թվականի հուլիսի 31-ին և սեպտեմբերի 25-ին, մինչդեռ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները հրապարակվել են 2026 թվականի մարտի 2-ին:

Այսպիսով՝ Ընկերության կողմից իր պաշտոնական կայքում, ինչպես նաև «Գնումների մասին» օրենքով նախատեսված՝ հրապարակման ենթակա

տեղեկատվության հրապարակման նպատակով գործող procurement.am ինտերնետային կայքում, Պահանջների 6-րդ կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված հայտարարությունները և նույն կետի 5-րդ ենթակետով նախատեսված արձանագրությունները վերը նշված գործարքների մասով հրապարակվել են սահմանված ժամկետների խախտմամբ, և Ընկերության կողմից ներկայացված փաստարկներով նույնպես չի ժխտվել նշված ժամկետների խախտման հանգամանքը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերն ու «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման №2 հավելվածով սահմանված Պահանջների 6-րդ կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերությամբ և նույն կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
------- 2026թ.